ԳԼՈՒԽ ՃԾԳ.

Ամենայն որ ոք մուծանէ ոսկի և երծաթ 'ի տարը յաշխարհէ առ աշխարհն հայոց, գտցի շնորհս 'ի տանէն հայոց և ազատ 'ի հարկից և մաքսից։

ԳԼՈՒԽ ՃԾԴ.

Ամենայն ոք որ հանող ոսկոյ և երծաթոյ 'ի աշխարհէն հայոց թէ տացէ երաշխաւոր, զի փոխանակ հանելոյ աշխարհէն մին հարիւր դահեկանս կրկին մուծանէ մին հարիւր և երեսուն դահեկանս ժամանակաւ մինչի երկուս ամս գտցէ արձակութիւն հանելոյ որքան որ կարող գտանի։

ԳԼՈՒԽ ՃԾԵ.

Մի ոք իշխանաց աշխարհի և ժողովրդենէ համարձակեսցի խառնել զինքն ընդ խորհուրդս, կամ գործս եկեղեցականաց, բայց պաշտօնն երից-փոխանութեան։

ԳԼՈՒԽ ՃԾԶ.

Մի ոք եկեղեցականք համարձակիցէ մուծանել զինքն ընդ խորհուրդ կամ գործս իշխանութեան և կամ աշխարհականաց, բայց փոխանորդ էկլէզիաստիկաց 'ի տանուտէրութեան։